ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/2

24 մայիսի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Ամալյա Մինասյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ 14.04.2016թ-ի թիվ 5103439 ակտի դեմ:

Ա/Ձ Ամալյա Մինասյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ կազմակերպական և հսկողական վարչության 14.04.2016թ. թիվ 5103439 ստուգման ակտով առաջադրվել է տուգանք 300.000 դրամի չափով, որը անօրինական է և պետք է ճանաչվի անվավեր՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Ակտով արձանագրվել է, թե իբր հարկային տեսչության աշխատակիցների կողմից գնվել է ապրանք, որի համար կատարված վճարման դիմաց ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Նշվածը (արձանագրվածը) բացարձակապես չի համապատասխանում իրականությանը:

Հարկ է նշել, որ խանութում տեղադրված է տեսախցիկ և խանութում կատարվող անցուդարձը տեսանկարահանվում է: Լրացուցիչ կարգով կներկայացվի նաև համապատասխան ապացույցները:

Ամբողջ իրականությունը եղել է հետևյալը.

Ստուգման ակտում նշված աշխատակիցներից մեկը 2016թ-ի մարտի 24-ին առավոտյան ներս է մտել խանութ, առանց ներկայանալու, առանց որևէ փաստաթուղթ ներկայացնելու, առանց խոսք ասելու, միանգամից մոտեցել է ՀԴՄ-ին և սկսել ինչ-որ գործողություններ կատարել: Վաճառողուհին զարմացած հարցրել է, թե այդ անձնավորությունն ինչ է կատարում: Ի պատասխան խանութի աշխատակցի հարցին, նա ասել է, որ ՀԴՄ սարքող է: «Z» հաշվետվությունը հանելուց հետո միայն, նա ասել է, թե ինչ-որ մեկը խանութից առևտուր է արել և նրան ՀԴՄ կտրոն չեն տրամադրել: Մի քանի րոպե անց ներս էն մտել նաև այլ անձինք, հավանաբար մյուս աշխատակիցները, և սկսել են ուսումնասիրել խանութում առկա ապրանքները:

Հարկ է նշել նաև, որ ստուգման ակտում նշված անձինք խանութում գտնվելու ընթացքում բառացիորեն հայտարարել են, որ 20 օր եկել-գնացել են, բայց չեն կարողացել բռնել:

Բացի այդ, հաջորդ օրը, այսինքն՝ 2016թ-ի մարտի 25-ին նշված աշխատակիցներն այցելել են Երևանում գտնվող գանգատաբերին պատկանող հագուստի խանութ և հետ են վերադարձրել մի քանի օր առաջ այնտեղից գնված ապրանքները, և խնդրել, որպեսզի վաճառողուհին գումարը հետ վերադարձնի, ասելով, որ իրականում այդ ապրանքները գնվել են ստուգման նպատակով: Խանութի վաճառողուհին ստիպված կատարել է նրանց խնդրանքը, սակայն հարկային ծառայողներն այդ մասին որևէ փաստաթուղթ չեն կազմել:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ ստուգման ակտում նշված պաշտոնատար անձինք ակնհայտ կերպով չարաշահել են իրենց պաշտոնեական լիազորությունները:

Բացի այն, որ արձանագրվել է մի խախտում, որն իրականում չի կատարվել, այլ նաև ենթադրյալ ստուգման ամբողջ ընթացակարգը իրականացվել է և ստուգման

ակտը կազմվել է ՀՀ օրենսդրության ակնառու և կոպիտ խախտումներով: Մասնավորապես.

1. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրեևքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենքով նախատեսված հսկողության իրականացման նպատակով հարկային մարմինը «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքին համապատասխան իրականացնում է ստուգումներ և ուսումնասիրություններ, ընդ որում ստուգումներ անցկացնելու հանձնարարագրի վավերապայմանների, դրանք ստուգվող սուբյեկտին ներկայացնելու պահանջների նկատմամբ կիրառվում են նշված օրենքի 2-րդ հավելվածի դրույթները:

Ծանոթանալով ստուգման ակտին և կից փաստաթղթերին գանգատարկման հանձնաժողովը նույնպես կհամոզվի, որ վերը նշված իրավական նորմերի պահանջները չեն կատարվել:

2. Ստուգման ակտի 1-ին էջում նշվել է, թե իբր ստուգումն իրականացվել է գանգատաբերի մասնակցությամբ, (ինչը չի համապատասխանում իրականությանը), մինչդեռ հենց ստուգման ակտի 1-ին կետում նշված է, որ նա բացակայել է ստուգման վայրից:

3. Ստուգման ակտում նշված պաշտոնատար անձանց կողմից չեն ներկայացվել ծառայողական վկայականներ, չի ներկայացվել ստուգման հանձնարարագիրը: Ի դեպ այն, որ ստուգման հանձնարարագիր չի ներկայացվել, դա նշված է նաև հենց ստուգման ակտի նախագծում: Այսինքն, հենց ստուգման ակտի նախագծում ստուգումն իրականացնող պաշտոևատար անձինք նշել են, որ ծառայողական վկայականները չեն ներկայացրել, չեն ներկայացրել ստուգման հանձնարարագիրը: Այսինքն, հենց ստուգումն իրականացնող պաշտոևատար անձինք են փաստել, որ ենթադրյալ ստուգումն իրականացրել են օրենքի ակնառու և կոպիտ խախտումով:

Հարկ է նշել նաև, որ ստուգման հանձնարարագրի չներկայացնելը չէին կարող պատճառաբանել այն հանգամանքով, որ Ա/Ձ-ն խանութում չի եղել: Վերջինիս բացակայության ժամանակ համապատասխան հրամանի համաձայն իրեն փոխարինող պաշտոնատար անձ է հանդիսացել Գրետա Բաղդասարյանը:

4. Ստուգման ակտում նշվել է, թե իբր գնվել է 2950 դրամի չափով 0,5 կգ աղացած սուրճ, 1 տուփ «Թիգ-Թագ» տեսակի կոնֆետ, 1 տուփ «Պարլամենտ կարատ» տեսակի ծխախոտ: Սակայն եթե պարզ թվաբանական հաշվարկ կատարենք կհամոզվենք, որ իրականում որևէ գնում չի կատարվել: Այսպես, խանութում «Թիգ-Թագ» տեսակի կոնֆետի վաճառքի գինը կազմում է 220 դրամ, «Պարլամենտ կարատ» տեսակի ծխախոտը վաճառքի գինը կազմում է 850 դրամ, սուրճի 1 կգ-ի վաճառքի գինն ըստ տեսակների կազմում է համապատասխանաբար 2500 դրամ, 3000 դրամ, 3500 դրամ և 5000 դրամ: Եթե ընդունենք, որ գնվել է «Թիգ-Թագ» տեսակի կոնֆետ և «Պառլամենտ կարատ» տեսակի ծխախոտ, ապա կստացվի, որ 0,5 կգ սուրճի վաճառքի գինը կազմել է 1880 դրամ: Այսինքն ստացվում է, որ մեկ կիլոգրամ սուրճի վաճառքի գինը պետք է կազմեր 3760 դրամ, այնինչ այդ գնով սուրճ խանությում երբևէ չի վաճառվել:

5. Ստուգման ակտի նախագծի 1-ին կետում արձանագրվածն ու ստուգման ակտի 1-ին կետում արձանագրվածն էականորեն տարբերվում են միմյանցից, ինչը ևս օրենքի կոպիտ խախտում է:

6. Ստուգման ակտի նախագծում ստոգվող ժամանակաշրջանի վերջ է նշվել 06.04.2016թ-ը, իսկ ստուգման ակտում՝ 14.04.2016թ-ը:

7. Սույն գործով թիվ 5103439 ստուգման հանձնարարագիրը հրապարակվել է 2016թ-ի փետրվարի 24-ին, այնինչ այն ծանոթացման է ներկայացվել 2016թ-ի մարտի 26-ից հետո, այսինքն՝ 30 օրացուցային օր անցնելուց հետո, որի արդյունքում խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի, 46-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի համապատասխան հրամանի պահանջները:

Ըստ գանգատի, խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի դրույթներով գանգատաբերը խնդրում է ՀՀ ԿԱ ՊԵԿ 14.04.2016թ. թիվ 5103439 ստուգման ակտը անվավեր ճանաչել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 24.02.2016թ-ի թիվ 5103439 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Ամալյա Մինասյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ 14.04.2016թ-ի թիվ 5103439 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ գլխավոր հարկային տեսուչ Արտակ Սահակյանի կողմից 24.03.2016թ-ին ժամը 09:15-ի սահմաններում ք.Սևան, Նաիրյան 140 11 հասցեում գործունեություն իրականացնող Ա/Ձ Ամալյա Մինասյանին պատկանող խանութից կատարվել է գնում 2950 դրամի չափով՝ 0,5 կգ աղացած սուրճ, 1 տուփ «Թիգ-Թագ» տեսակի կոնֆետ, 1 տուփ «Պարլամենտ կարատ» տեսակի ծխախոտ, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Վճարված գումարը վաճառող-գանձապահ Աիդա Ստեփանյանի կողմից չի մուտքագրվել ՀԴՄ և չի տրամադրվել համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից Ա/Ձ Ամալյա Մինասյանին պետք է ներկայացվեին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման, սակայն նա բացակայել է ստուգման վայրից: Ստուգողները վաճառող-գանձապահ Աիդա Ստեփանյանին ներկայացրել են ծառայողական վկայականները, իսկ հանձնարարագիրը նույն օրը Ա/Ձ-ին է ուղարկվել փոստի միջոցով: Այնուհետև ժամը 09:20-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն 0 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չի եղել կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 2950 դրամը, ժամը 09:20-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել ՀԴՄ կտրոն և ժամը 09:20-ին կրկին դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ 2950 դրամ ընդհանուր գումարով: Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից

խախտվել են ՀՀ կառավարության 2013թ-ի օգոստոսի 1-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման» կարգի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որը նայն կարգի 40-րդ կետի համաձայն հանդիսանում է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում: Արդյունքում կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամի չափով:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ ակտում նշված աշխատակիցներից մեկը 2016թ-ի մարտի 24-ին առավոտյան ներս է մտել խանութ, առանց ներկայանալու, առանց որևէ փաստաթուղթ ներկայացնելու միանգամից մոտեցել է ՀԴՄ-ին և սկսել ինչ-որ գործողություններ կատարել, նշվեց հետևյալը.

Գլխավոր հարկային տեսուչ Արտակ Սահակյանը նախ նշեց, որ ք.Սևան, Նաիրյան 140 11 հասցեում գտնվող խանութը, որտեղ որ իրականացվել է ստուգումը, 24.03.2016թ-ին բացվել է ժամը 09:00-ին: Մինչև Արտակ Սահակյանի կողմից գնում կատարելը, խանութից գնում է կատարել մի քաղաքացի, որին ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Այնուհետև խանութ է մտել Արտակ Սահակյանը և ժամը 09:15-ի սահմաններում կատարել է Ակտում նշված ապրանքների գնումը, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 2950 դրամ: Սակայն վաճառող-գանձապահ Հիդա Ստեփանյանի կողմից գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և չի տրամադրվել համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն:

Ա/Ձ Ամալյա Մինասյանի ներկայացուցիչը Հանձնաժողովին ներկայացրեց խանութում տեղադրված տեսախցիկի 24.03.2016թ-ի տեսագրությունը, որը սկսվում է ժամը 09:20-ից: Հանձնաժողովի անդամների հարցին, թե ինչու է ներկայացվում ժամը 09:20-ից կատարված տեսագրությունը, այն դեպքում, երբ խանութը բացվել է ժամը 09:00-ից, իսկ գնումը կատարվել է ժամը 09:15-ի սահմաններում, ինչեց պատասխան, որ իր վստահորդի կողմից իրեն է հանձնվել է միայն այս տեսանյութը:

Հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված տեսանյութը որևէ կերպ չի ապացուցում գանգատում բերված պնդումները՝ ստուգող անձանց կողմից որևէ խախտում չհայտնաբերելու վերաբերյալ, քանի որ Ակտում նկարագրված գնումը, ինչպես նաև դրան հաջորդաց համապատասխան գործողությունների մի մասը կատարվել են մինչև ժամը 09:20-ն ընկած ժամանակահատվածում: Ավելին, գանգատաբերի ներկայացուցչի կողմից ժամը 09:20-ից կատարված տեսագրության տրամադրման հանգամանքը, ըստ էության, հիմնավորում է Ակտում նկարագրված փաստական հանգամանքների իսկությունը, քանի որ հակառակ դեպքում Հանձնաժողովին կներկայացվեր ժամը 09:00-ից կատարված տեսագրությունը:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ Ա/Ձ Ամալյա Մինասյանին չի ներկայացվել ստուգման հանձնարարագիրը, հարկ է նշել հետևյալը.

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը ստուգումն սկսելուց առաջ պատշաճ ձևով (*<u>առձեռն կամ փոստով</u>*) ներկայացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Տվյալ դեպքում ստուգման պահին Ա/Ձ Ամալյա Մինասյանը խանութում չի գտնվել, ինչի հետևանքով հանձնարարագրի օրինակը նույն օրը Ա/Ձ Ամալյա Մինասյանին է ուղարկվել փոստային ծառայության միջոցով: Ինչ վերաբերվում է

գանգատում բերված պնդումներին, որ համապատասխան հրամանի համաձայն Ա/Ձ Ամալյա Մինասյանին փոխարինող պաշտոնատար անձ է հանդիսացել Գրետա Բաղդասարյանը, որին և պետք է ներկայացվեր հանձնարարագրի օրինակը, ապա այդ կապակցությամբ ստուգումն իրականացնող անձինք նշեցին, որ ստուգման ընթացքում որևէ հրաման, որը կհավաստեր Գրետա Բաղդասարյանը Ա/Ձ Ամալյա Մինասյանին փոխարինող պաշտոնատար անձը հանդիսանալու մասին, իրենց չի ներկայացվել: Նման ապացույց չներկայացվեց նաև նիստի ընթացքում:

Վերոգրյալից հետևում է, որ հանձնարարագրի օրինակը Ա/Ձ Ամալյա Մինասյանին փոստային ծառայության միջոցով ներկայացվելու պայմաններում ստուգումն իրականացնող անձինք գործել են «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դրույթների շրջանակում:

Ըստ գանգատի, Ակտում նշված ապրանքների ընդհանուր արժեքը չէր կարող 2950 դրամ կազմել, քանի որ այդ դեպքում կստացվի, որ մեկ կիլոգրամ սուրճի վաճառքի գինը կազմել է 3760 դրամ, իսկ այդ գնով սուրճ խանութում երբեք չի վաճառվել:

Վերոգրյալի կապակցությամբ գնումը կատարած Արտակ Սահակյանը նշեց, որ իր կողմից գնվել է ոչ թե մեկ տեսակի աղացած սուրճ, այլ պատվիրվել է մի քանի սուրճի տեսակներից պատրաստել որոշակի փունջ: Դա է պատճառը, որ ստուգման ընթացքում գնված 0,5 կգ աղացած սուրճի արժեքը կազմել է 1880 դրամ:

Ելնելով վերոգրյալից և ուսումնասիրելով սույն գործին առնչվող ապացույցները Հանձնաժողովը գտնում է, որ իրականացված ստուգմամբ հիմնավորվել է Ակտում նշված ապրանքների գնման դիմաց վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվելու փաստը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը՝

ո ր ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ 14.04.2016թ-ի թիվ 5103439 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝ **Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**